ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«10» 12 2021թ.
№24/1-5/308108

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ (+374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

«ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ԻՆ
/Ք.ԳԱՎԱՌ, Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1-ԻՆ ՓՈՂ. Հ. 16 Տ./

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ -ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 12.05.2021 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով պետք է իրականացվեն՝ ՀՀ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում հենապատերի վերանորոգման աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 183 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե՝

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը՝ մասնավորապես Սարալանջի փողոցի 165 տան հարակից տարածքում և Սարի Թաղի 5-րդ շարք 157-րդ տան հարակից տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքները Կապալառուի կողմից կատարվել են /աշխատանքի գինը կազմել է 2.769.400 ՀՀ դրամ, որը մեր կողմից վճարվել է/, իսկ աշխատանքների մյուս մասը Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ ժամկետում իրականացնել մյուս հենապատերի վերանորոգման աշխատանքները, սակայն նշված պարտավորությունները չեն կատարվել:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 11.08.2021թ. 24/2-8/18933ել գրության և 16.07.2021թ. 24/1-8/16741ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /մասնակի/ հրաժարվում է «ՍՄԲԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ-ի հետ կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/39» ծածկագրով գնման պայմանագրի չկատարված մասից /Երևան քաղաքի Խաղաղ Դոնի 1-ին շենքի հարակից տարածքում գտնվող հենապատի վերանորոգման աշխատանքների չափաբաժնի մասով՝ 1.987.600 ՀՀ դրամի չափով/ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ ԵՔ- ԲՄԱՇՁԲ-21/39/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն <<ԱՅ ԴԻ ԲԱՆԿ>> ՓԲ ընկերություն տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված ժամկետներից /որակավորման ապահովում 713.550 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 475.700 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ**

Իրավաբանական բաժին
Կատ.՝ Հ. Կնյազյան
(0 11)518340